

ՄԱՐԳԻՆ

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1999 ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 31 ՕԳՈՍՏՈՍ 2015
• VOL. XXXVI, NO 1999 • LUNDI, 31 AOÛT 2015 • MONDAY, AUGUST 31, 2015

1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԳ ՏԱՐԵՎԱՐՁ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

Լիպերալ Կուսակցութեան Ահունսթիք-Գարթիեվիլի թեկնածուի ընտրութիւնը

Մելանի Ժօլի սուր պայքարը ետք ընտրուեցաւ թեկնածու

Վիզէն Ադդարեանի պատուաբեր ընտրապայքարը

Կիրակի Օգոստոս 23-ին տեղի ունեցաւ Գանատայի Լիպերալ կուսակցութեան, Ահունսթիք-Գարթիեվիլ շրջանի թեկնածուի ընտրութիւնը անլի քան մէկ տարի տեւող անսախաղէպ սուր ընտրապայքարը մը ետք:



Ինչպէս գիտենք Գանատայի Ֆետերալ ընդհանուր ընտրութիւնները տեղի պիտի ունենան յառաջիկայ Հոկտեմբեր 19-ին:

Ընդհանուր ընտրապայքարը արդէն իսկ քանի մը շաբաթներէ ի վեր թափ ստացած ըլլալով հանդերձ, արտասովոր պարագայ մըն էր որ Ահունսթիք-Գարթիեվիլի հայաշատ շրջանին մէջ, Լիպերալ կուսակցութիւնը տակաւին չէր կրցած իր թեկնածուն յայտարարել: Անլի եւս անսախաղէպ կացութիւն մըն էր այն պարագան, որ անլի քան մէկ տարիէ ի վեր ներքին սուր ընտրապայքար մը տեղի կունենար այդ թեկնածուն նշանակելու համար:

Ութ թեկնածութեան, թեկնածուներ ներկայացած էին այս ընտրապայքարին որոնցմէ վերջաւորութեան մնացին չորս հոգիներ: Հորսէն մէկն էր յայտնի կերպով կուսակցութեան կեդրոնին նախընտրելի բնիկ Քէպէքցի Մելանի Ժօլին որ նաեւ անձնական բարեկամն է կուսակցութեան ղեկավար Ժասթին Թրիւտօի:

Հորսերէն մէկն էր նաեւ գաղութիս ծանօթ եւ կարող անդամներէն Վիզէն Ադդարեանը որ տեղի չի տալով տարբեր ճնշումներուն, իրիստ պատուաբեր ընտրապայքար մը տարաւ երկար ամիսներէ ի վեր:

Անցեալ Կիրակի օր Օգոստոսի 23-ին տեղի ունեցաւ ի վերջոյ պաշտօնական ընտրութիւնը: Յիշատակելի էր Վիզէն Ադդարեանի վերջին ընտրապայքարի ելոյթը ուր ան ցոյց տուաւ իր մտաւորական եւ քաղաքական բարձր մակարդակը ինչպէս նաեւ տարբեր եօթ լեզուներով գեղեցիկ կերպով արտայայտուելու կարողութիւնը:

Արդիւնքը սակայն եղաւ ըստ ընդհանուրին նախատեսութեան, Մելանի Ժօլի յաղթանակը: Վիզէն Ադդարեան պատշաճ կերպով ընդունեց այս արդիւնքը եւ զօրակցութիւնը յայտնեց Ժօլիին: Մինչ որպէս հայ կրնանք հպարտանալ Վիզէնի տարած բարձր մակարդակի ընտրապայքարով, սակայն առանց մանրամասնելու ցաւով պետք է նշենք որոշ հայ շրջանակի մը ինչպէս նաեւ նոյնիսկ Վիզէնի մօտ կարգ մը անձերու ժխտութիւնը ամբողջական զօրակցի կանգնելու հայազգի արժեքաւոր այս թեկնածուին:

Իրան – Հայաստան երկաթուղիի կառուցման աջակցելու առաջարկ ներկայացուցած է Չինաստանը

Իրան-Հայաստան տնտեսական յարաբերութիւնները կը թեւակոխեն շրջադարձային նոր հանգրուան: Երկու երկիրները կը միացնէ Իրան-Հայաստան ելեկտրահաղորդման գիծը: Համաձայնագիրը ստորագրուած է, եւ առաջին յենասիւնները պիտի դրուին մօտ ապագային:

«Համագումարն էմ, որ Իրանի հետ համագործակցութիւնը՝ յատկապէս ուժանիւթի մարզին մէջ, պիտի նպաստէ երկու երկիրներուն միջեւ ապրանքներու շրջանառութեան ծաւալներու զգալի աճին: Հայաստանի կառավարութիւնը կ'ողջունէ
Շար. էջ 3

ՆԱԽԱՐԱՐ ՔԵՆՆԻ ԱՅՑԵԼԵՑ ԼԱՎԱԼԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ




Ձախէն՝ Թեմական Խորհուրդի անդամ Ճէք Սերայտարեան, Տէր Վազգէն Քինյ, Պոյաճեան, Նախարար Ճէյսըն Քէննի, Առաջնորդարանի դիւանապետ Լեւոն Իսախանեան եւ ԹՄՄ-ի ատենապետ Արթօ Մանուկեան

Գանատայի Ազգային Պաշտպանութեան եւ Բազմամշակոյթի նախարար՝ պատուաբեր Ճէյսըն Քէննի, ընկերակցութեամբ Լավալ-Լէզիլ ընտրաշրջանի երեսփոխանական Պահպանողական կուսակցութեան թեկնածու Պրն. Բոլան Տիքի եւ Լավալ-Վիմի ընտրաշրջանի Պահպանողական Թեկնածու Անթընի Մալրոսի, ընտրաշրջանի ծիրէն ներս, այցելեց Լավալի Ս. Իսաչ Հայոց Եկեղեցին, ուր այցելուները ընդունուեցան Սոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Վազգէն Քինյ. Պոյաճեանի, Թեմական Ժողովի անդամ՝ Տիար Ճէք Սերայտարեանի եւ Սոնթրէալի ու Լավալի հայ համայնքի ներկայացուցիչներու կողմէ: Հանդիպման ընթացքին Նախարարը ներկայացուց Պահպանողական Կուսակցութեան տեսլականը ինչ կը վերաբերի տեղական եւ միջազգային հարցերու, ներառեալ Սուրիայի եւ Իրաքի փոքրամասնութիւններու կացութեան հարցերը:

Գանատահայ աշակերտուհիին հնարած արիւն մաքրելու սարքը միջազգային ուշադրութեան կ'արժանանայ

Արիւն մաքրելու (տայալիսիս) փոքր, աժան եւ արդիւնաւետ սարքը, որուն հեղինակը գանատահայ Անիա Փողարեանն է, միջազգային ուշադրութեան արժանացած է: Այս մասին կը գրէ CBC կայանը:



«Հնդկաստանէն, Աւստրալիայէն, Ռուսիայէն, Հայաստանէն, Հարաւային Ամերիկայէն եւ այլ տեղերէ նամակներ կը ստանամ», յայտնած է Փողարեան, որ 17 տարեկանին կրցած է հնարել նշեալ սարքը:

Գանատայի տարբեր անկիւններէն հիւանդներ եւս կապ հաստատած են անոր հետ՝ շնորհաւորելով եւ յաջողութիւն մաղթելով անոր, իսկ Օնթարիոյէն բժշկական ընկերութիւն մը նոյնիսկ առաջարկած է հովանաւորել անոր գործունեութիւնը եւ գտիչներ տրամադրել: Այս լուրը, որ լայնօրէն

լուսաբանուած էր լրատուամիջոցներով, միջազգային ուշադրութեան արժանացած է, ինչ որ մղած է Անիան անցնելու յաջորդ հանգրուան: Իր իսկ խօսքով՝ առանց ձեռքերը ծալելու կ'աշխատի, որպէսզի բարելաւէ իր սարքը, որ մօտաւորապէս 500 տոլար կ'արժէ: Ներկայիս նման սարքեր կ'արժեն մօտաւորապէս 30,000 տո-

լար: Անիա Փողարեան յայտնած է, թէ իր սարքի արդիւնաւետութիւնը, պարզութիւնն ու փոքր չափը զայն իտեալական կը դարձնեն յատկապէս զարգացող երկիրներուն եւ աղէտի վայրերուն մէջ գործածելու համար: Ան յոյս յայտնած է, որ սարքը շուկայի վրայ կ'ըլլայ քանի մը տարիէն:

ԼՂՀ Փոխնախարար. «Ատրպեյճանի հակաբայլերը իւրօրինակ քարոզչութիւն են ԼՂՀ զբօսաշրջութեան համար»

Լեռնային Ղարաբաղի տնտեսութեան նախարարի տեղակալ Սերգէյ Շահվերդեան Tert.am-ի հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին յայտնած է, որ Լեռնային Ղարաբաղ այցելող զբօսաշրջիկներուն թիւը մնայուն աճի մէջ է. 2015-ի առաջին վեց ամիսներուն՝ նախորդ տարւան հետ բաղդատելով արձանագրուած է 20 տոկոսի աճ:

«Մենք անցած վեց ամսուայ ընթացքում արձանագրել ենք 120 տոկոս աճ զբօսաշրջիկների, նախորդ 7 տարիների համեմատութեամբ, այս տարի գրանցուել է 20 տոկոս աճ», ըսած է ան:

Սերգէյ Շահվերդեան ընդգծած է, որ երբ կը խօսին Լեռնային Ղարաբաղի զբօսաշրջիկներու թիւի աճին մասին, բացառապէս նկատի ունին օտար զբօսաշրջիկները, որոնք Ղարաբաղ մտնելու համար մուտքի արտօնագիր ստացած են:

«Այսինքն՝ Հայաստանի քաղաքացիները, Սփիւռքի մեր հայրենակիցները, ովքեր ունեն հայկական անձնագրեր, այդ թուաքանակից դուրս են: Ղարաբաղը իւրայատուկ եւ իւրօրինակ հետաքրքրութիւն ներկայացնող երկիր է, այնպէս միայն հայերը չեն, որոնց համար գրաւիչ է», ըսած է ան:

Փոխնախարարը նաեւ նշած է, որ Արցախ այցելած Հայաստանի քաղաքացիներու թիւը եւս մեծապէս բարձրացած է:

«Մենք շարունակում ենք մեր քաղաքականութիւնը մշակուած զբօսաշրջիկների թուաքանակի աճը աւելացնելու ուղղութեամբ, շարունակում ենք քարոզչութեան տարածումը, զբօսաշրջային վայրերի բարեկարգումը», ըսած է ան:

Անդրադառնալով ատրպեյճանական հակաքարոզչութեան, մասնաւորաբար երբ Ատրպեյճանի «սեւ ցուցակ»ին մէջ կը ներառուին Լեռնային Ղարաբաղ այցելած օտարներ՝ փոխնախարարը դիտել տուած է, որ ատիկա էական ազդեցութիւն չ'ունենար զբօսաշրջիկներուն Արցախ այցելելու փափաքին վրայ:

«Զբօսաշրջութիւնը շատ զգայուն ոլորտ է, եւ ամէն մի հանգամանք կարող է նշանակութիւն ունենալ, բայց ինչ վերաբերում է Ատրպեյճանի «սեւ ցուցակներին», ապա ես չեմ կարծում, որ այդ ցուցակը ինչ-որ էական ազդեցութիւն կարող է ունենալ այդ զբօսաշրջիկների Արցախ այցելելու ցանկութեան վրայ», հաստատած է ան:



Պատասխանելով այն հարցումին, թէ չի՞ կրնար ըլլալ, որ հակաքարոզչութիւնը հակառակ ազդեցութիւն ունենայ՝ Սերգէյ Շահվերդեան նշած է. «Մենք ընդհանրապէս ձգտում ենք Ատրպեյճանի ցանկացած քայլեր վերածել քարոզչութեան՝ ի նպաստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան զբօսաշրջութեան իմեջ բարձրացմանը: Դա մշտապէս կատարուում է նոյն միջազգային զբօսաշրջային ցուցահանդեսների ժամանակ, Ատրպեյճանի հակաքայլերը միշտ իւրօրինակ քարոզչութիւն են դառնում Ղարաբաղի համար եւ բոլոր միւս հանգամանքները», ըսած է ան:

Թղթակիցը հարցուցած է, որ Արցախի մէջ ի՞նչ բան կը գրաւէ զբօսաշրջիկները. փոխնախարարը յարմար նկատած է այս հարցումը ուղղել Արցախ այցելողներուն, բայց եւ այնպէս դիտել տուած է, որ անոնք կը գրաւուին Արցախի ժողովուրդով, անտառներով, յուշարձաններով, միրգերով: «Դա միասնական բրենդ է, որը չէս կարող տարանջատել, թէ ում որն է աւելի շատ հետաքրքրում: Մէկին հետաքրքրում է համեղ միրգը, մէկին՝ անտառը, միւսին՝ յուշարձանը, միւսին՝ արցախեան ուտեստները եւ այսպէս շարունակ», ըսած է ան:

Անդրադառնալով գիներուն եւ զանոնք բաղդատելով Հայաստանի հետ՝ փոխնախարարը նշած է, որ ինք չի կարծեր, թէ Հայաստանի զբօսաշրջութեան գիները, բացի օդանւաւային տոմսերէն, մեծապէս կը տարբերին նմանօրինակ այլ երկիրներու գիներէն: Անոր համաձայն՝ Ղարաբաղի մէջ եւս կան տարբեր գիներ, օրինակ՝ կայ 10 տոլար արժողութեամբ պանդոկ, ինչպէս

Շար. էջ 13

Քերթուքի մէջ հայկական եկեղեցի բացուած է

Իրաքի Քերթուք քաղաքին մէջ հայկական եկեղեցի բացուած է: Այս մասին՝ ermenihaber.am-ի փոխանցմամբ՝ կը գրէ թրքական «beyazgazete.com» կայքը: Եկեղեցւոյ բացման ներկայ եղած է Քերթուքի նահանգապետ Նեմեթթին Քերիմը, որ հանդէս եկած է ելոյթով: Քերիմ, տեղեկացնելով, որ վերջին տարիներուն Քերթուքի մէջ ապրող քրիստոնեաներու 75 տոկոսը հեռացած է երկրէն, ըսած է, որ իրենք կ'ընեն հնարաւորը այդ արտագաղթը կանխելու համար:

Նահանգապետը ըսած է, որ չնայած Պաղտատի հետ քաղաքական հակասութիւններուն իրենք կը շարունակեն իրականացնել նախատեսուած ծրագիրները: Արքեպիսկոպոս Ապիտին Մարկոսեան նշած է, որ վերջին տարիներուն քրիստոնեաները եւ յատկապէս հայ քրիստոնեաները իրաքի մէջ մեծ դժուարութիւններու միջով կ'անցնին:

«Այդ ամէնուն հիմնական պատճառը ծայրայեղական կազմակերպութիւններն են: Կեանքի ապահովութեան համար Քերթուքէն հազարաւոր հայ ընտանիքներ հեռացած են: Այսօր Քերթուքի մէջ հազիւ 50 հայ ընտանիք կ'ապրի»:

ԱՊՐԱԿԱՅ

Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ԱԼԵՏԻՍ ՊԱԳԳԱԼԵԱՆ

Ծանուցումներու,
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍԼԹ Բ. ՄԱՄՈՒԻԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$90
U.S.A. 1st class (US)\$90
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945

TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Գերմանիոյ դեսպանութիւնը 41.000 Եւրօ պիտի տրամադրէ Հայաստանի գիւղերուն մէջ իրականացուող ծրագիրներուն


Հայաստանի մէջ Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան դեսպանութիւնը այս տարի նոյնպէս կ'օժանդակէ փոքր դրամաշնորհային ծրագրի ծիրէն ներս իրականացուող նախաձեռնութիւններուն: Այս մասին, ըստ Armenpress.am-ի, կը տեղեկացնեն ՀՀ-ի մէջ Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան դեսպանութեան մամուլի բաժինէն:

Վերջին օրերուն պայմանագրեր ստորագրուած են հայկական այն կազմակերպութիւններուն հետ, որոնց ներկայացուցած ծրագիրները հաւանութեան արժանացած են: «Ուրախ ենք, որ այս տարի մեզի հասած են մեծ թիւով լաւ յայտեր: Յաջողակ նախաձեռնութիւնները անցած են դժուար ընտրութեան գործընթացի մը մէջէն: Մեր կողմէն քննարկուած են 125 դիմում-յայտեր եւ մեզի համար որոշում կայացնելը եղած է շատ դժուար», - ըսած է դեսպանութեան գործերու ժամանակաւոր հաւատարմատար Նատիա Լիխտենպըրկըր:

Դեսպանութեան փոքր դրամաշնորհային ծրագիրը կ'օժանդակէ


կարճաժամկետ ձեռնարկներ, որոնք կոչուած են արձագանգելու կարիքաւորութեան կետային խնդիրներուն եւ կրնան նպաստել բնակչութեան ամենախոցելի խումբերու կենսապայմաններու բարելաւման՝ առաւելութիւնը տալով գիւղական վայրերուն: Ընդհանուր առմամբ, այս տարուան ծրագիրներուն համար յատկացուած է 41.000 Եւրօ:

Այս տարի օժանդակութիւն պիտի ստանան շարք մը նոր նախաձեռնութիւններ: Մասնաւորապէս, «Հայկական ճամբար» լեզուի եւ առագաստանաւի դպրոց ՀԿ՝ Սեւանայ լիճի ափին արձակուրդային ճամբարի վերակառուցում, Գանձաքար գիւղի շահառուներու խումբ՝ գիւղացիներու եւ փոքրձեռներեցներու համար շարժական շուկայական ծրագրի ստեղծում, Սիւնիքի գարգացման ՀԿ (Եղեգնաձոր)՝ թիւ 64 մանկապարտեզի բակային պարագաներու համալրում, «Յոյսի կամուրջ» ՀԿ (Նոյեմբերեան)՝ հաշմանդամներու արհեստանոցի համալրում, Ֆրանսիայական զարգացման հիմնադրամ խուլ եւ համր անձերու ուսուցիչներու վերապատ-



րաստում, Հայկական Կարմիր խաչի ընկերութիւն՝ Արովեանի հանրակացարանին մէջ հանրային սենեակի ստեղծում, «Սուրբ Սանդուխտ» կանանց ՀԿ՝ Գեղարքունիքի մարզի հինգ դպրոցներու համար մարզական պարագաներու ձեռքբերում, ՀԵՆԱ ՀԿ (Սառնաղբիւր)՝ երիտասարդական համայնքային կեդրոնի ստեղծում, «Լոռէ» Եկոնակումբ ՀԿ (Ստեփանաւան)՝ տասը արեւային չորանոցներու կառուցում միրգի չորացման համար:

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”



Պարոնուհի Քերոլայն Քօքս ուխտագնացուրիւն կազմակերպած է դեպի Արցախ

Դարձեալ Արցախ գացած է հայ ժողովուրդի բարեկամ, Մեծ Բրիտանիոյ խորհրդարանի լորտերու պալատի անդամ, պարոնուհի Քերոլայն Քօքսը՝ խումբ մը ուխտաւորներու հետ: Այս մասին կը յայտնէ Artsakhpress-ը:

Աղբիւրի համաձայն Քաշաթաղի «Մերան» պաշտօնաթերթի խմբագիր Չոհրապ Ընթոյեանը յատնած է, որ ուխտաւորները պիտի գիշերեն Բերձորի՝ Յակարի գետի ափին ստեղծուած բանակավայրի մէջ:

Բերձորի մուտքի մօտ հիւրերը դիմաւորած են Քաշաթաղի շրջանային վարչակազմի ղեկավարի տեղակալներ՝ Արտուշ Մխիթարեանը, Յակոբ Սալամեանը եւ աշխատակազմի ղեկավար Դաւիթ Դաւթեանը:

Պարոնուհի Քօքսը իր խօսքի մէջ նշեց, որ Արցախը իրեն համար հարազատ երկիր է՝ դեռ պատերազմի տարիներէն: Քերոլայն Քօքսը իր խումբի անդամներուն, որոնց մեծ մասը առաջին անգամն է Արցախ կու գան,



պատմած է գոյամարտի եւ արցախցիներու հերոսական պայքարի մասին: Խօսելով Քաշաթաղի շրջանի մասին, ան նկատեց, որ հայ ժողովուրդը մշտապէս աւերակներու վրայ հիմնած ու ծաղկեցուցած է իր երկիրը:

Ուխտագնացութեան մասնակիցները վաղը արշաւելով Բերձորէն պիտի ուղղուի դեպի Շուշի եւ Ստեփանակերտ:

Նշենք, որ ուխտաւորներու շարքերու մէջ են նաեւ Արցախեան գոյամարտի մասնակից հաշմանդամներ, որոնք բուժուած են Ստեփանակերտի Քերոլայն Քօքսի անուան վերականգնողական կեդրոնէն ներս: Անոնք իրենց երախտագիտութիւնը յայտնած են պարոնուհիին՝ օժանդակելու եւ նման բժշկական հաստատութիւն հիմնելու համար, այնտեղ ուր բուժուած են բազմաթիւ հաշմանդամ ազատամարտիկներ: Ապա արտերկրէն ժամանած բոլոր ուխտաւորները, իբրեւ նուէր ստացած են Հայոց Յեղասպանութեան մասին պատմող գիրքեր ու սկաւառակներ, որոնք յատկացած են ՀՀ կառավարութեան կողմէն:

ՀՀ առաջին Տիկին Ռիթա Սարգսեանի բարձր հովանաւորութեամբ տեղի պիտի ունենայ Երեւանեան 9-րդ երաժշտական փառատօնը

Երեւանեան 9-րդ երաժշտական փառատօնի մեկնարկը պիտի տրուի մեծահռչակ ջութակահար Վատիմ Ռեբիկի (Ռուսաստան) մենակատարութեամբ:

Փառատօնը պիտի մեկնարկէ Սեպտեմբեր 10-ին: Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նուագախումբի պաշտօնական կայքէն կը տեղեկանանք, որ մինչեւ Յոկտեմբեր 28-ը շարունակուող փառատօնի ընթացքին պիտի կայանան մէկ տասնեակէ աւելի համերգներ, ելոյթ պիտի ունենան յայտնի երաժիշտներ՝ Պարրի Տուկլաս, դաշնամուր (Իռլանտա), Վենցել Ֆուխս, լարիներ (Գերմանիա), Էրմ Քաշաթեան, այտ (ԱՄՆ), Իտա Գաւաֆեան, այտ (ԱՄՆ), Անի Գաւաֆեան, ջութակ (ԱՄՆ), Լեւոն Չիլինկիրեան, ջութակ (Մեծ Բրիտանիա) եւ ուրիշներ:

Երեւանեան միջազգային երաժշտական փառատօնի կազմակերպիչն է Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նուագախումբը: Փառատօնը կ'իրականացուի ՀՀ Առաջին Տիկին Ռիթա Սարգսեանի բարձր հովանաւորութեամբ եւ մշակոյթի նախարարութեան աջակցութեամբ:

Փառատօնի գեղարուեստական ղեկավարներն են Ալեքսանդր Չաուշեան եւ Էդուարդ Թօփչեան:

Տիգրանակերտ ծնած իսլամ մը մկրտուած է եւ դարձած հայ քրիստոնեայ

Տիգրանակերտ ծնած Էրտալ անունով տղամարդ մը, որ Հայաստան կը գտնուէր մասնակցելու Համահայկական 6-րդ խաղերուն, հրաժարած է իսլամութենէն եւ մկրտուած է Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ:

Երիտասարդը վերադարձած է Տիգրանակերտ, տեղւոյն անձնագրային բաժանմունքին մէջ փոխած է անձնագիրը, որուն մէջ նշուած էր, թէ ազգութեամբ թուրք է, իսկ կրօնով իսլամ: Նոր անձնագիրին մէջ գրուած է, որ ան հայ է եւ քրիստոնեայ: Մկրտուելէ ետք Էրտալ ունեցած է նոր անուն եւ կոչուած Փարամազ:

Տարիներ առաջ նման քայլի դիմած էր Տերսիմի հայերու միութեան նախագահ Միհրան Փրկիչ:



Կերչինս ծնած է Տերսիմ եւ աւելի քան 50 տարի Սելահաթին Կիւլթէփի ինքնութեամբ ապրելէ ետք մկրտուելով դարձած է Միհրան Փրկիչ:

Իրան-Հայաստան երկաթուղիի... Շար. էջ 1-էն

Իրանի հիւլէական ծրագիրին շուրջ համաձայնութիւնն ու կարելոր կը նկատէ Իրանի ու միջազգային միջնորդներու կառուցողական ջանքերը: Պէտք է արձանագրել, որ այդ համաձայնութեամբ շրջանը երկարատեւ խաղաղութեան եւ կայունութեան հասցնելու հարցին մէջ կարելոր քայլ կատարուած է», կառավարութեան նիստին ընթացքին ըսած է վարչապետ Յովիկ Աբրահամեան:

Հայաստանը չինական կողմէն Իրան-Հայաստան երկաթուղիի կառուցման աջակցելու առաջարկ ստացած է, սակայն թէ երկաթուղիով առաջին շոգեկառքը ե՞րբ պիտի շարժի, փոխադրութեան եւ կապի նախարար Գագիկ Բեգլարեանը տակաւին չի գիտեր: «Չինական կողմը շահագրգռուածութիւն ունի եւ իմ կարծիքով շատ լաւ առաջարկներ կատարած է, քննարկենք, տեսնենք, թէ այդ մէկը ինչպէ՞ս կրնանք իրականացնել», ըսած է Գագիկ Բեգլարեան:

Վազգեն Առաջին. «ՉԱստուած փնտռելու ճամբին ես գտայ Ս. Էջմիածինը եւ իմ Յայրենիքը»

«Երանի այն երիտասարդներին, որոնք գիտեն՝ ի՛նչ կարդալ, ե՛րբ կարդալ եւ ինչքա՛ն կարդալ»:
«Յայրենիք ստեղծելը հերոսութիւն է, հայրենիք շէնացնելը՝ առաքինութիւն»:

Վազգեն Ա.

Ամեն տարի Օգոստոս 18-ին, կը նշուի երջանկայիշատակ Վազգեն Առաջին Ամենայն Յայոց Կաթողիկոսի յիշատակի օր: 1994 թ. Օգոստոս 18-ին, Յինգաբքի օրը, առաւօտեան ժամը 07.15-ին, Երեւանի հայրապետական իր առանձնատան մէջ, 86-ամեայ տարիքին, երկարատեւ ու ծանր հիւանդութենէ յետոյ, վախճանած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Առաջին Ամենայն Յայոց Կաթողիկոսը:



Վազգեն Առաջինը (Լեւոն-Կարապետ Աբրահամի Պալճեան) ծնած է 1908թ. Յունկոմի 3-ին Պոլիսարեստ: 1937թ. աւարտած է Պոլիսարեստի պետական համալսարանը: 1943թ. ստացած է վարդապետի կոչում, 1951թ. օծուած է եպիսկոպոս: 1929-43թթ. դասաւանդած է Պոլիսարեստի հայկական դպրոցներուն մէջ, եղած է հայ ռազմագերիներուն օգնող կոմիտէի (1942-44 թթ.) կազմէն: 1943թ.-ի Սեպտեմբերին ռումանահայ թեմական խորհուրդի որոշումով մեկնած է Աթէք, ուր Սրբ. Կարապետ եկեղեցւոյ մէջ ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: Նոյն թուականի Նոյեմբերին ընտրուած է Ռումանիոյ հայոց թեմի առաջնորդական տեղապահ, ապա՝ թեմի առաջնորդ (1947-55 թթ.): 1948 թ-ի Մայիս 23-ին, Ս. Էջմիածինի Մայր Տաճարին մէջ, Ամենայն Յայոց Կաթողիկոս Գեորգ 2. Չորեքեան զինք օծած է

ծայրագոյն վարդապետ, 1951թ-ի Մայիսին՝ եպիսկոպոս: 1954թ-ի Դեկտեմբեր 31-ին ստանձնած է Նաեւ Պոլկարիոյ հայոց թեմի առաջնորդի պարտակա-նութիւնները: 1955թ.-ին ընտրուած է Ամենայն Յայոց Կաթողիկոս:

«ՉԱստուած փնտռելու ճամբին ես գտայ Ս. Էջմիածինը եւ իմ Յայրենիքը, եւ խոնարհուեցի ճակատագրին առջեւ» (ՎԱԶԳԵՆ Ա.):

Մեծ է Վազգեն Ա.-ի աւանդը Յայ եկեղեցւոյ միասնութեան հաստատման, միջեկեղեցական յարաբերութիւններու ընդլայնման ասպարեզին մէջ: Ամենայն Յայոց Կաթողիկոս

ընտրուելէն ետք՝ Սփիւռքի համախմբուածութիւնը զօրացնելու եւ հայրենիքի հետ կապերը ամրապնդելու նպատակով՝ շուրջ 30 հոգուապետական այցելութիւն կատարած է Յայ եկեղեցւոյ թեմեր, միջեկեղեցական ծիրէն ներս հանդիպումներ ունեցած քոյր եկեղեցիներու հովուապետներու հետ, արտերկրի մէջ ներկայացուցած է Յայ եկեղեցին ու հայ ժողովուրդը:

Վեհափառ հայրապետի շնորհիւ փրկուած ու Երեւանի Մատենադարանին յանձնուած են Վեհափառի եւ Վեհամօր անուններով կնքուած երկու Աւետարանները, Թորոս Ռոսլինի ծաղկած Չէյունի Աւետարանը եւ Մալաթիայի Աւետարանը, Թովմա Արծրունիի «Պատմութիւն Արծրունեաց տան» աշխատութեան պահպանուած միակ ձեռագիր օրինակը եւ բազմաթիւ այլ ձեռագիրներ, արժեքաւոր վաւերագրեր:

1988թ. Փետրուար 25-ին Արցախը Յայաստանի հետ վերամիաւորելու հարցով դիմած է ԽՍՀՄ Նախագահ Մ. Գորբաչովին, Արցախեան շարժման ընթացքին խորհրդային եւ միջազգային ամենաբարձր ատենաներու մէջ լսելի դարձուցած է արցախահայութեան ձայնը:

Յայրապետական առանձին տնօրինութեամբ վերահաստատած է Յայ եկեղեցւոյ Արցախի թեմը (1989թ.), ձեռնարկած Արցախի

շարք մը եկեղեցիներու եւ վանքերու վերաբացումն ու վերանորոգումը: Վազգեն Ա. Կաթողիկոսը ծաւալած է եկեղեցաշէն-վերականգնողական մեծ աշխատանք:

Վերանորոգուած են Մայր տաճարը, Էջմիածինի Ս. Յովսէփմէ, Ս. Գայիանէ, Ս. Շողակաթ վանքերը, Գեղարդաւանքը, Խոր Վիրապի վանքը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց, Երեւանի Ս. Սարգիս, Ս. Զօրահաննէս, Մոսկուայի, Դոնի Ռոստովի եւ Արմաւիրի եկեղեցիները: Մայրավանքի շրջակայքին կառուցուած են Նահատակաց յուշարձանը, Խրիմեան Յայրիկին Նուիրուած աղբիւրկոթողը, Գալուստ Կիւլպէնկեան վանատունը, Ալեք եւ Մարի Մանուկեան գանձատունը:

Պարզեատրուած է ԽՍՀՄ Ժողովուրդներու բարեկամութեան, Պատուոյ Նշան, Ռումանիոյ Յանրապետութեան աստղ շքանշաններով, Խաղաղութեան համաշխարհային խորհուրդի Ժոյի-Կիւրիի անուան եւ Խաղաղութեան պաշտպանութեան խորհրդային կոմիտէի ոսկէ մետալներով:

Վազգեն Ա.-ի անունով կը կոչուին Վանաձորի թիւ 1 միջնակարգ դպրոցը եւ Սեւանի հոգեւոր դպրանոցը: 1994թ.-ին անոր շնորհուած է ՀՀ ազգային հերոսի կոչում: Պարզեատրուած է ՀՀ բարձրագոյն Յայրենիքի շքանշանով:

Չինաստանի նախագահը միջոցներ յատկացուցած է Իրան-Յայաստան երկաթուղագիծի կառուցման համար

Չինական կողմի համար Իրան-Յայաստան երկաթուղագիծը շատ կարեւոր է եւ Չինաստանի նախագահը այդ ճանապարհին համար գումարներ յատկացուցած է:



Այս մասին, ըստ Artsakhpres.am-ի, յայտարարած է ՀՀ փոխադրամիջոցի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարեան:
«Չինաստանը շահագրգիռ է մետաքսի ճանապարհի վերականգնման գործում:
Դրա համար նման ծրագրերում գործունեութիւն ծաւալած չինական շատ կազմակերպութիւններ ունեն շահագրգռուածութիւն այդ երկաթուղու կառուցման գործում ունենալու իրենց ուրոյն տեղը», - ըսած է Բեգլարեան:
Նախարարը նաեւ նկատած է, որ իրենք ամէն ինչ պիտի ընեն, որպէսզի այդ ուղղութեամբ խնդիրները յարթահարուին: «Երբեք չենք յայտարարել, որ դա շատ հեշտ է կառուցուելու ու լուրջ խնդիրներ չունենք: Երկաթագծի կառուցումը բոլորիս է անհրաժեշտ», - ընդգծած է նախարարը:

Յայոց Ցեղասպանութեան թանգարան այցելեցին թուրք մտաւորականները



Հելսինքի ամառնային դպրոցի աւելի քան 50 անդամներ, թուրք մտաւորականներ, դասախօսներ, ուսանողներ, Ամերիկայի հայկական համագումարի տարածաշրջանային վերլուծաբան Ալին Օզինեանի ուղեկցութեամբ՝ Օգոստոս 15-ին այցելեցին Յայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկ: Պատուիրակութեան անդամներուն Յայոց Ցեղասպանութեան պատմութիւնը ծանօթացուց թանգարան-հիմնարկի տնօրէն Յայկ Դեմոյեան:
Անոնք ծանօթացան նաեւ Յայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի ժամանակաւոր ցուցադրութիւններու սրահին մէջ բացուած «Յայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» խորագիրով ժամանակաւոր ցուցահանդէսի նիւթերուն: Հանդիպման վերջաւորութեան, Հելսինքեան համաժողովի կազմակերպիչները առանձին քննարկում ունեցան Յայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Յայկ Դեմոյեանի հետ: Պատուիրակութեան անդամները այցելեցին նաեւ Մեծ Եղեռնի յուշահամալիրը, ուր ծաղիկներ գետեղեցին ու յարգեցին անմեղ զոհերու յիշատակը: Նշենք, որ 2015-ի Ապրիլին ի վեր, թանգարան այցելած է Թուրքիոյ աւելի քան երեք հարիւր քաղաքացի:

ԿԱՂՆԻ ՄԸ ԵՄ ԻՆԿԱԿ

ԱՆՆՄԱՆ ԵՂՐՕՐԱ՝ ՅԱԿՈՐԻՆ ԱՆՄՈՂԱՆԱԿԻ ԵՎ ԵՄ ԻՆԿԱԿ

Սիրելի Յակոբ, վերջին անգամ, Մայիս 15, 2015ին երբ կրկին անգամ կ'ողջագուրուեիք, նախքան օդակայան մեկնելու, երբեք չէի երեւակայեր թէ՛ չորս շաբաթներ յետոյ, անակնկալօրէն ստացած առողջական իրարայաջորդ անողորմ հարուածներու հետեւանքով, այլեւս պիտի զրկուէի թեզ կրկին ողջունելու բերկրանքէն:



Հոկտ. 3, 2010 Երևանի տուչութեան ընթացիկ.

Այս գիրովս նպատակայարմար դատեցի, որպէս շարունակութիւն թեզ հետ ունեցած հերթական հեռաձայնային խօսակցութեանս, ինչպէս դուն ամէն առիթով կը սիրէիր կրկնել՝ «պատմէ»ներուդ, տեղեկացնել թէ՛ ինչէ՛ր պատահեցան Յուլիս 13, 2015ին, Rose Hills գերեզմանատան թիւ 1210 յատուկ մատրան մէջ, առաւօտեան ժամը 11-ին:

Մինչ Լուսինե Չաբարեանի, ծայրագուրած սրտառու մեղեդիները երկիւղածութեամբ կ'ունկնդրէին սգակիր ընտանիքէդ՝ Պետրոսն ու Աննը, Լիզ Անին եւ Brian-ը, ինչպէս նաեւ յիշատակդ յարգող մօրաբոնոյդ զաւակները, ՌԱԿ-ի գաղափարի ընկերներդ, ՅԲԸՄ-ի, ԹՄՄ-ի եւ Յայց. Առաքելական Եկեղեցւոյ պատասխանատուները, թեզի սրտակից բարեկամութեամբ կապուած՝ ծանօթ ընտանիքներու պարագաները ու եգիպտահայ ընկերներդ կազմուած բազմութիւնը, Վարդանանց Ասպետներու Ներկայացուցիչները կատարեցին իրենց տպաւորիչ իրաժեշտի արարողութիւնը, որմէ յետոյ, Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի ներկայացուցիչ՝ Արժ. Ս. Արշակ Աւագ Զինյ. Խաչատուրեան, սկսաւ հանդիսաւորապէս կատարել Թաղման Կարգի յատուկ արարողութիւնը: Արժ. Ս. Յայրը ընթերցեց Առաջնորդ սրբազան իր ուղղած ցաւակցական դիպուկ գիրը եւ Ս. Ներսէս Շնորհալի Շքանշանի տուչութեանը առիթով, Հոկտ. 3, 2010-ին, Ամենայն Յայրոց Յայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.-ի Սրբ. Կոնդակէն երկու պարբերութիւններ, որոնք կը ցուցանէին քու Յայաստանեայց Եկեղեցւոյ մատուցած անսակարկ ծառայութեանց, ազգային հասարակական կեանքիդ մէջ իրագործած եւ Էջմիածնի անսասանութեան պահպանման ի գին ցուցաբերած նուիրագործութեանդ արգասիքը:

Այս առթիւ Տեր հայրը կարգաց թեզի ծանօթ ողբ. Բանաստեղծ ու մտաւորական, սիրելի ընկեր Ալեք Գրընճեանի, բարեկամի մը մահուան առիթով գրած «Տապալանգիր» ոտանավորը, զայն պատշաճեցնելով քու կատարած լիարժէք ու անշահախընդիր նուիրումով ի կեանքիդ, հետեւեալ դիպուկ վերջաբանով՝ «Միս ու ոսկոր կը հանգչի՛ն Շիրմաքարիդ սեւ խաչին Կ'ըլլաս յուշ մը հեռակայ Գի'րն այս պիտի թեզ ողբայ»

Սիրելի Բարսեղ Գարթալեանը, Աղէքսանդրիոյ «Տիգրան Երկաթ»ի եւ ՌԱԿ-ի Ակումբի Կրտսեր ընկերդ, որպէս դամբանական խօսած բովանդակալից պատմական ակնարկով, լաւագոյնս դրսեւորեց, ծննդավայր Աղէքսանդրիայէն մինչեւ Խաղաղականի այս ափին, Լոս Անճե-

լըսի մէջ, քու կատարած արդիւնաբեր ազգային հասարակական կեանքիդ բազմաշերտ, երախտաշատ ծառայութիւններն ու գործունէութիւնները.

Բարսեղին առաջարկով, առաջին հերթին, թեզի այնքան սիրելի սանուհիդ՝ Լիզ Անին, յանուն Փիանտարեան ընտանիքի հարազատներուդ ու ամուսնոյն Brian-ին, անգլերէնով իր զգացուած ու արցունքախառն ելոյթով դրուատեց, նախ իր եւ քոջը՝ Ալիս-Ազատին տածած յատուկ սերը յանդէպ թեզի, որպէս իրենց միակ իրաւաբանը, որ ամէն առիթով կ'զգացնէիր թէ՛ յիշատակը անթառամ պիտի մնայ ընտանիքիդ մէն մի անդամին սիրտին եւ մտքին մէջ:

ՅԲԸՄ-ի կորովի Նախագահ՝ Պերճ Սեդրակեանի ցաւակցական նամակը, Կազմակերպութեան կրած մեծ կորուստին կապակցութեամբ, ուղղուած Միութեան Արեւմտեան ափի Շրջ. Վարչութեան, ընթերցեց Փաստաւեճ-Կլէմէնտի վարչութեան երիտասարդ Ատենապետ՝ Յրանդ Վարձպետեանը:

Որմէ յետոյ՝ Գեորգ (Ճորճ) Մանտոսեանը, Թեթեանի Կեդրոնական Վարչութեան փոխ-Ատենապետ եւ Արեւմտեան շրջանի պատասխանատուներէն, սրտաբուխ ելոյթով արտայայտուեցաւ երկար տարիներու ընթացքին, որպէս գործակիցներ քու համեստութեամբ, անձնագոհութեամբ եւ կարգապահութեամբ կատարած նուիրեալ աշխատանքիդ մասին:

Ու յանկարծ, ի զարմանս բոլորիս, Արցախի ազատագրման շարժումին դրապէս մասնակցող, Գալիֆորնահայութեան քաջ ծանօթ՝ նուիրեալ մարտիկ՝ Capt. Վահէ Գազանճեան իր ռազմիկ ընկերոջ՝ Վահէ Մետրոպեանի հետ, վերընծիւղուած Արցախի մարտիկներու յատուկ տարագով, յառաջացան դեպի կիսաբաց դագաղդ, եւ ի յարգանս թեզի «Պատուոյ Կաց»ի հանդիսաւոր բարեկամ լէյտնանտականացած մթնոլորտին մէջ, Մարտունիի 1922-ի ճակատագրական մարտերուն յաղթեպսակներու արժանացած, Capt. Վահէ Գազանճեանի մակագրած «Յաղթանակի Դրօշ» եռագոյնով զարդարեցին դագաղիդ բացուած կափարիչէն՝ երեւցող լուսապսակ դէմքը:

Անգին եղբայրս, երանի թէ վայրկեանի մը համար գլուխդ բարձրացնէիր եւ յատկանշական ժպիտդ դէմքիդ, աչքերդ բանայիր ըմբռնելու համար պարզուած այս աննախընթաց տեսարանը, նամանաւնդ հուսկ յետոյ երբ Ընկ. Արա Ահարոնեան, կենսագրական-գործունէութիւններուդ ամփոփ ընթերցու-

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴ

Սգակիր Յակոբ Փիանտարեանի Ընտանիքին

Քիչ անգամ կը հանդիպիք մարդկանց, որոնք իրենց աստուածատուր կեանքը ապրած են յարատեւ ներհայեցողութեամբ եւ իրենց շրջապատին հաղորդած անկորնչելի հոգեւոր արժէքներ: Այդպիսին էր նաեւ հանգուցեալ Յակոբ Փիանտարեանը, որուն հետ միայն Լոս Անճելըս Առաջնորդական մեր պաշտօնի բերումով ծանօթանալու պատեհութիւնը ունեցանք եւ առաջին իսկ առիթով զգացինք որ անձը իր մէջ կը կրէր ամբողջ պատմութիւն մը, դեռեւս Եգիպտոսէն սկսեալ, ուր ներգրաւուած էր ազգային-եկեղեցական կեանքի մէջ որպէս քերթօնէն նուիրեալ սպասաւոր մը:

Մարդը՝ Աստուծոյ պատկերը կրող հոգեւոր էակն է: Ուրեմն նոյն մարդը պարտի ապրիլ ստեղծագործ կեանքով: Այդպիսի արժեւորեալ կեանք մըն է ապրած նաեւ Յակոբ Փիանտարեան, որուն անձին հանդէպ մենք ունեցած ենք խոր ակնածանք: Երանելի է ան, որ միայն բարի յիշատակ է թողած սերունդներու հոգիներուն մէջ:

Մեր աղօթքն է առ բարին Աստուած, որ երկնային լոյսերու մէջ հանգչեցնէ հանգուցեալ Յակոբ Փիանտարեանի հոգին ու իր հարազատներուն պարգէւ կենաց քաջամոռջ երկար կեանք:

Հազար փառք կու տանք Աստուծոյ, որ օրհնեց Մեր Սուրբ Եկեղեցին ու ազգը Սուրբ Էջմիածնի Խորհուրդով հարուստ եւ նուիրեալ սպասաւոր Յակոբ Փիանտարեանի կեանքով:

Մնամք աղօթարար՝
ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Պրոպէս, Յուլիս 13, 2015

մէն յետոյ, Եռագոյնի կողքին տարածեց ՌԱԿ-ի գինանշանակիր կապուտակեայ դրօշը:

Մատրան մէջ կայացած, «Հերոս»ի մը վայել այս անակընկալ գուրգուզանքն ու հպարտութիւն առթող անմոռանալի արտայայտութենէն ետք, երբ Վահէն եւ Արան, սրբազան դարձած խորհրդանիշներ՝ Եռագոյն ու ՌԱԿ-ի դրօշակները ինծի յանձնեցին, Վահէին իսկ վկայակոչութեամբ, ի յայտ եկաւ թէ՛ քանիցս առաջարկած էր, որ դուն, սիրելի եղբայրս, միանայիր իրեն դեպի Արցախ կատարած ճամբորդութիւններէն մեկուն, որպէսզի ատենի Արցախի Նախագահը՝ Արկաղի Դուկասեան անձամբ շնորհակալութիւն յայտնէր թեզի, քանի երկրագործական բարերարութեան սատարող, բաղադրական նորանոր գիտելիքներդ, Վահէին միջոցաւ փոխանցելով, ապահովուեցին Արցախի թէ Յայաստանի, նամանաւնդ ցորենի որոշ տեսակի մը, բերքի քանակային աճն ու որակը:

Փիանտարեաններուն համար, վերոնշեալ աննախընթաց յարգանքի դրսեւորման տուն տուող պատճառը պարզուեցաւ՝ երբ անձնուէր Վահէն ակնցուց, թէ իր կրկնակի վերյիշումներուն, միշտ ժպտադէմ կ'ըսէիր, «գալ անգամ միասին կը ճամբորդենք»:

Ապա, սիրելի եղբայրս, Գալիֆորնիայի կիզիչ արեւին տակ, ներկայ չորս հարազատներդ՝ հանդիսաւորապէս մեր ափերով վերցուած հողով, խաչակնքեցինք դագաղդ՝ բարի երթ մաղթելով թեզի դեպի անդեակն:

Երբ դագաղիդ կնքման վերջին արարողութեամբ, Արժ. Ս. Արշակը եւ Բրշ. Յակոբ Սրկ. Կակոսանը, իրենց սրտառու ի վերին երուսադէմով, կը մխիթարէին վշտակից ներկայ սիրելիներդ, անակնկալօրէն Բարսեղին եւ Արային գիսաւորութեամբ ու սգակիր շարքային ընկերներուդ մասնակցութեամբ, սկսաւ երգուիլ

Չինուոր ենք Ռամկավար եւ ազատ

Հայ ցեղին զաւակներ հարազատ Չրահուած հայրենեայց հաւատքով

.....
ՌԱԿ-ի խրախուսիչ բայերգը. Փաստէնայի Ռաֆֆի ճաշարանին մէջ սպասարկուած Հոգեճաշի ընթացքին, շնորհակալութիւն յայտնեցի, Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանին եւ ՅԲԸՄի Նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեանին, այս տխուր առիթով իրենց յղած ցաւակցական գիրերուն համար, մատրան մէջ ելոյթ ունեցողներ՝ Արժ. Տեր Արշակ Աւագ Զինյ. Խաչատուրեանին, Բ. Գալթալեանին, Ա. Ահարոնեանին, Յ. Վարձպետեանին, Գ. Մանտոսեանին, Վարդանանց Ասպետներուն եւ Վ. Գազանճեանին ու ծաղկեպսակներ ղրկելով իրենց վշտակցութիւնը յայտնող ՅԲԸՄ-ի՝ Կեդրոնական Վարչութեան, Գալիֆորնիոյ Շրջ. Վարչութեան եւ Նիւ Եորքի Կեդր. Գրասենեակի անձնակազմին, ինչպէս նաեւ Եգիպտահայ ընկերներու ու մօրաբոնոջ Լաճառեան ընտանիքին:

Հուսկ յետոյ աննման ընկերոջ ողբ. Չաւենին 28 տարիներ առաջ, Արգետի սեփական նոր բնակարան փոխադրմանը ուրախ առիթով Փիթըր (Պետրոս) որդոյն, հետ որպէս նուէր բերած մէկ մեթր բարձրութեամբ իտալական գինիի շիշը, Աճճեաններու եւ Փիանտարեաններու հաւանութեամբ, բացուեցաւ եւ Հոգեճաշի սեղանակիցները Ձեր (աննման Հենրիին (Չաւեն) եւ պաշտելի Յակոբ եղբօրս) անթառամ յիշատակին բարձրացուցին իրենց բաժակները:

Բարի երթ դեպի անմահութիւն սիրելի եղբայրս, կը խոստանամ այս պատումիս շարունակումը թեզի պատմել, երբ Ամենակալին տնօրինութեամբ գիրար կրկին ողջունենք:

Սիրով,
Պետրոս

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՄՔԿԻԼԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՓՐՈՖ. ՅԱՍՄԻԿ ԻՆՃԵՃԻԿԵԱՆԻ ՀԵՏ

Հայոց Ցեղասպանության 100-ամեակի նշան Մոնթրեալի Միացեալ Յանձնախումբը յառաջիկայ 27 Սեպտեմբերին Փոլաք Հոլի մեջ կը ներկայացնէ Մեծ Եղեռնէն վերապրած հայ երաժիշտներու վաստակին նուիրուած համերգ մը, գլխավոր կազմակերպութեամբ երաժիշտ Եւ Ղասախօս Յասմիկ Ինճեճիկեանի: Ստորեւ՝ այդ կապակցութեամբ կատարուած հարցազրոյց մը Տիկին Ինճեճիկեանի հետ: Խմբ.

Հ. Ինչո՞ւ համար այս նախաձեռնութիւնը:
Պ. Իրապէս, ինչո՞ւ համար, երբ լրիւ տարի մը այս ժողովուրդը յագեցաւ բազմաթիւ Եւ բազմաժանր մշակութային թէ երաժշտական ձեռնարկներով, ինչո՞ւ այս մէկը:

Նախ, ըսեմ որ, զոնէ Մոնթրեալի մէջ, մինչ օրս չիլիք եղեռնէն վերապրած այն սերունդը որոնց ստեղծագործութիւնները կամուրջ մը հանդիսացան կորսուածին՝ Եւ նոր պայմաններուն միջեւ: Կամուրջի մը քանդումը, որը եղեռնը գործադրողին հիմնական նպատակն էր, այսինքն՝ խզել մշակութային կապը այս ժողովուրդին իր անցեալի մշակոյթին հետ: Վերապրող սերունդը՝ անհնարին կացութիւններ յաղթահարելով կրցաւ ըսել. - Ես կը յիշեմ, ոչ միայն կը յիշեմ այլ նաեւ կրնամ ստեղծագործել իմ նախահայրերու երաժշտական լեզուով, կրնամ նորոգել փլած Եւ փլցուելիք կամուրջները Եւ մշակութային շարունակականութիւնը պահպանել:

Այսօր, սակայն եղեռնը իրագործողը չէ որ կը փորձէ փլցնել այդ կամուրջները. մենք ենք, մեր անտարբերութեամբ, մեր օտարամոլութեամբ, մոռնալով այն ժառանգը, որ այդ սերունդը ստեղծեց մեզի համար վերանորոգելով կամուրջները:

Այս ծրագրի առաջին նպատակն է վերապրող երաժիշտներու երգային ժառանգութիւնը վերադարձնել մեր նոր սերունդին: Այսպիսով, կը յուսանք, որ ոչ միայն Կոմիտասեան Եւ Սայաթ Նովեան երգերը, այլ նաեւ Ալեմշահերու, Պերպերեաններու, Կանաչեաններու, Պետելեաններու, Մետումեցներու Եւ այլ բազմաթիւ արեւմտահայ յետ-եղեռնեան երգահաններու ստեղծագործութիւնները մեր երգիչներու համերգային ծրագրերուն մէջ մնայուն տեղ ունենան:

Երկրորդ նպատակն է, իր արդիական վերադարձնելու նպատակով, դիւրացնել ոչ-հայ երգիչ-երգչուհիներուն համար այս երգացանկին տիրապետելու միջոցը. փորձառութեամբ կ'ըսենք, անոնք յաճախ ցանկացած են այս երգերը սորուիլ, սակայն անմատչելի ըլլալուն համար դժուարացած են Եւ կամ կախեալ եղած են իրենց ուսուցիչէն:

Հ. Ի՞նչ հիման վրայ որոշած էք ներկայացնել այս երաժիշտներուն գործերը:

Պ. Ինչպէս ըսի, այս երաժիշտներու ընտրութիւնը անոնց յետ-եղեռնեան սերունդին պատկա-

նելիութիւնն էր, յատկապէս անոնք որոնք ճաշակեցին տեղահանութիւնը, կորսնցուցին ընտանիք, տուն ու բնակավայր: Հասկնալի է, որ ցանկը ամբողջական չէ Եւ թէ ծրագրի հաւանական շարունակականութեան պարագային պետք է տակաւ ամբողջացուի: Անկասկած, այս ծրագրի մէջ ներառուելիք շատ գեղեցիկ կտորներ կան, սակայն անկարելի պիտի ըլլար այդ բոլորը մէկ անգամէն հրամցնել Եւ հրատարակել:

Պետք է խոստովանիմ, որ Կոմիտասի երգերը այս ծրագրի մէջ մտան գործակիցներու խընդրանքով, աւելի շուտ պահանջով: Սա ցոյց կու տայ, որ Կոմիտասն արդէն իր արդար տեղը գրաւած է միջազգային երգարուեստի մէջ:

Կը մնար, որ այդ երգերն ալ ներկայացուէին արդիական ոճով:

Հ. Ինչպէ՞ս կարելի եղաւ սոյն ելոյթը ծրագրել ՄՔԿԻԼ Համալսարանի երաժշտանոցին հետ:

Պ. Երգերը նոր սերունդին փոխանցել եր մեր նպատակը. երբ կարելի չեղաւ այդ մէկը իրականացնել, դիմեցի ՄՔԿԻԼ երաժշտանոցի առժամեայ տնօրէնին՝ Փիթեր Ֆրիմընին, որ ծանօթանալով ծրագրի մտքին Եւ եղեռնեան անմիջապէս առաջարկեց իր անսակարկ օժանդակութիւնը՝ ծրագրի յաջողութեան:

ՄՔԿԻԼ Շուկիի երաժշտական դպրոցին կողմէ երաժշտանոցի անձնակազմին տարեկան 4 ձեռնարկ-համերգ վերապահուած է գեղջուած սակով գործածելու Pollack կամ Redpath սրահները: Այս դրութեան օգտուելու համար պետք եղած դիմումագիրը պատրաստուեցաւ Եւ սրահը տրամադրուեցաւ մեզի, որպէս երաժշտանոցի ուսուցիչ, staff and guest artists անունին տակ: Այսպէսով, սոյն համերգը կը ներկայացնէ ՄՔԿԻԼ երաժշտանոցը՝ The Vocal Art of Armenian Composers : Survivors of the Genocide անունին տակ:

Հ. Ի՞նչ կ'ակնկալէք սոյն ծրագրէն:

Պ. Ծրագիրը ունի երկու գլխաւոր բաժին (զանց առնելով նախապատրաստական աշխատանքները.- երաժիշտներու Եւ երգերու ընտրութիւն, կենսագրական տուեալներ, ծանօթութիւն երգերու ստեղծման Եւ յարակից տեղեկութիւնները): Համերգը՝ որու մասին վերը բաւարար տեղեկութիւն տրուեցաւ: Ինչ որ աւելի կարեւոր է հոս հրատարակութեան մասն է, որը ծրագրի կէսն է եթէ ոչ աւելին:

Այս բաժնին իրագործման մէջ է, որ կրնանք ակնկալելիք ունենալ: Տասնըտօթ երգ ընտրուած վերը նշուած երաժիշտներու ստեղծագործութիւններէն՝ typesetting-ով գրուեցան: Ի դէպ, այս երգերէն երկուքը մշակուեցան Միհրան Եսէկիւլեանի կողմէ, մին թեւորի Եւ դաշնամուրի

A McGill Conservatory Staff and Guests Concert

The Vocal Art of Armenian Composers

Survivors of the Genocide

KOMITAS ALEMSHAH BEDELIAN
BERBERIAN GANATCHIAN MESSOUMENTS

Sunday, September 27 | 4pm
Pollack Hall, 555 Sherbrooke St West

Artists

Aline Kutan
Sasha Djihanian
Armine Kassabian Michael McMahon
Elie Berberian
Mathieu Abel
Jeffrey Carl

Mashtots Choir | Directed by Gohar Manvelyan
With Patil Harboyan, piano

HASMIG INJEJIKIAN, PROJECT DIRECTOR

Tickets: \$25 | Students: \$15
McGill: 514-398-4547 | Armenian Community: 514-778-9479 or 514-892-0366
Proceeds go towards the McGill Conservatory Scholarship Fund
McGill/music/events | Genocidecentennial.ca

համար Եւ միւսը a cappella 5 ձայնի համար: Ասոնք առաջին անգամ պիտի ունկնդրուին Գանատայի մէջ Եւ հաւանաբար նաեւ այլուր:

Այս աշխատանքին մաս կը կազմեն բառացի Եւ յատկաբանական թարգմանութիւն, IPA (միջազգային հնչական այբուբեն), բանաստեղծական միտք, երգի մասին յաւելեալ տեղեկութիւններ Եւ յօրինողի կենսագրական տուեալները: Դիւրին չէր այս բոլորը հաւաքել, մանաւանդ երբ նկատի առնենք մեր ցրուածութիւնը Եւ արխիւային ցանցի մը կամ կեդրոնական գրասենեակի մը բացակայութիւնը:

Ի վերջոյ, կ'ակնկալենք, որ այս մարզին մէջ հայ թէ օտար երգարուեստի մէջ պատրաստուող տղաքը, ինչ աստիճանի վրայ ալ որ գտնուին, օգտուին թէ՛ համերգէն՝ Եւ թէ՛ հրատարակութենէն: Ի դէպ, գիրքերը կը ծրագրուի դրկել Հիւսիսային Ամերիկայի Եւ Գանատայի 100 երաժշտական դպրոցներու գրադարաններուն ձրիաբար:

Լ. Ղ. Հ. զինուած ուժերուն մէջ սկսած է բանակային ուսումնական նոր շրջանը

News.am կը հաղորդէ, որ 18 օգոստոսին պաշտպանութեան բանակին մէջ սկսած է բանակային ընթացիկ տարուան երկրորդ կիսամեակը: Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի մամլոյ ծառայութենէն կը յայտնեն, որ այդ առիթով բոլոր զօրամասերուն մէջ տեղի ունեցած են հանդիսաւոր նախաձեռնութիւններ, որոնց ընթացքին անդրադարձ կատարուած է նախորդ ուսումնական հանգրուանի հիմնական ձեռքբերումներուն Եւ բացթողումներուն, նշուած են այն հիմնական խնդիրները, որոնք պետք է իրենց լուծումը ստանան ամառնային ուսումնական հանգրուանին ընթացքին:

Հիւսիսարեւելեան ուղղութեամբ տեղակայուած զօրամասերէն մեկուն մէջ այս առիթով տեղի ունեցած ձեռնարկին մասնակցած է նաեւ Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի հրամանատար զօրավար-գնդապետ Լեւոն Մնացականեան: Պաշտպանութեան նախարարը՝ շնորհաւորելով անձնակազմը, խօսած է շրջանային արդի Եւ հաւանական զարգացումներուն, սահմանագիծին մէջ շարունակուող լարուածութեան մասին՝ նշելով, որ բոլոր մարտահրաւերներուն յաջողութեամբ կրնան դիմակայել միայն պատրաստուած ստորաբաժանումները, իսկ այդ առումով նոր



ուսումնական հանգրուանը հրամանատարական կազմին համար պիտի ըլլայ առիթ՝ անձնակազմը ուսուցանելու: Հանդիսաւոր ձեռնարկներու աւարտէն ետք զօրամասերուն մէջ սկսած են մարտական պատրաստուածութեան մարտավարաշարային մարզումները, որոնք պիտի շարունակուին յառաջիկայ օրերուն:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 31 AOUT 2015

Soldat tué par un tireur azéri au Karabagh



Un militaire arménien, Karen Parouir Hovhannisian a été tué le 12 août dernier, vers 12h30, par un tireur azerbaïdjanais à un poste militaire de l'armée de défense du Haut-Karabagh. Une enquête a été ouverte afin d'établir les faits.

Déjà deux tentatives infructueuses de soldats azéris de pénétrer en Arménie ont été contrecarrées dans cette même nuit du 12 août.

L'ancien ministre Vartan Oskanian opposé à la réforme constitutionnelle

L'ancien ministre des Affaires étrangères Vartan Oskanian a ajouté hier sa voix à l'opposition qui critique les modifications constitutionnelles radicales prévues par les autorités arméniennes. Pour lui, elles ne servent qu'à l'intérêt de Serge Sarkissian et entravent la démocratisation du pays.

"Il est évident que tout cela est fait pour satisfaire une seule personne et l'ambition d'une seule force politique pour rester au pouvoir", a écrit Oskanian sur sa page Facebook, en commentant les amendements à la Constitution arménienne rédigés par une commission.

Les amendements demandent la transition de l'Arménie vers un régime parlementaire, ce qui priverait le président de la République de pratiquement tous ses pouvoirs exécutifs en les transférant au Premier ministre soutenu par une majorité parlementaire. Les alliés politiques de Sarkissian disent une telle transition permettrait de décentraliser le pouvoir et donc de rendre le système politique du pays plus démocratique. La plupart des partis d'opposition rejette ces arguments, soutenant que Sarkissian veut seulement se cramponner au pouvoir après avoir terminé son deuxième et dernier mandat présidentiel en 2018.

Oskanian a affirmé que Sarkissian et le parti républicain manquent de légitimité et du mandat populaire pour mener à bien une telle transformation.



"Un changement radical du système de gouvernement exige une consolidation politique, civique et sociale beaucoup plus importante", a-t-il dit. "Il n'y a pas de consolidation autour de cette idée pour le moment."

Oskanian a également insisté sur le fait que le modèle constitutionnel « hybride » existant est bon pour l'Arménie.

Oskanian, qui a été très critique vis-à-vis de Sarkissian, n'a pas révélé s'il était prêt à rejoindre les principaux partis d'opposition pour faire échouer la réforme constitutionnelle.

Oskanian, qui a été ministre des Affaires étrangères entre 1998 et 2008 sous le régime de l'ancien président Robert Kotcharian, était jusqu'à récemment affilié au BHK. Il a démissionné en mars après que le leader Gagik Tsarukian s'est retiré de la vie politique.

Le mois dernier, un journal arménien a affirmé qu'Oskanian et plusieurs autres anciennes figures du BHK envisageaient de créer un nouveau parti d'opposition.

Deux militants du camp Armen battus

Le camp Armen, où le mouvement Zartonk manifeste depuis déjà 100 jours afin d'empêcher les autorités de démolir le site arménien, a été attaqué, selon une information publiée sur la page Facebook officielle du groupe.

La note, en turc, indique qu'à 23h30 heure locale, deux voitures se sont approchées de l'entrée du camp et ont commencé à battre les bénévoles du mouvement Zartonk qui montaient la garde. Deux personnes auraient été frappées à coup de baton, mais l'attaque a été repoussée.

Qualifiant l'agression de « manifestation d'une mentalité génocidaire », le mouvement Zartonk a déclaré que l'incident n'avait pas rompu la volonté du groupe de poursuivre leur campagne afin de sauver le camp Armen.

« Nous appelons le public à poursuivre ses actions avec la même détermination. Nous invitons la communauté à continuer de soutenir le mouvement afin de sauver le camp Armen, » a écrit le groupe sur sa page Facebook.

La révolution arménienne « incolore »

Editorial écrit en anglais par Edmond Y. Azadian et publié dans The Armenian Mirror-Spectator en date du 15 août 2015

Depuis la « révolution orange » en Ukraine et la « révolution des roses » de Géorgie, les experts dans les médias ont été prompts à attribuer une couleur à toute agitation sociale des anciennes républiques soviétiques. Les récentes manifestations en Arménie ne permettent pas d'atteindre l'amplitude d'une révolution pour être qualifié d'une couleur, même si toutes les apparences sont là.

Un pays en une telle détresse économique est sujet à des troubles sociaux, qui peuvent finalement terminer en une révolution. Les inégalités et les disparités en Arménie entre riches et pauvres sont de bons éléments pour fomentier des troubles. Tout comme il y a des « nouveaux riches », il y a aussi des « nouveaux pauvres », ces derniers ne le sont pas en raison d'un manque d'éducation, mais parce qu'ils sont les victimes de brusques retournements de fortune dans le sillage d'une société égalitaire soviétique en ruine. Les manifestations obscènes d'opulence en contraste avec la misère de la sous-classe, sont déchirantes. D'anciens professeurs ou scientifiques qui étaient autrefois assurés par le système soviétique d'un avenir sûr, ont fini par faire le tri des poubelles pour trouver de la nourriture.

USAID aurait fourni 750 000\$ au gouvernement arménien afin de contribuer à la lutte contre la corruption. En premier lieu, la campagne du gouvernement pour irradier la corruption est une anomalie. Dans un pays pauvre, où les employés du gouvernement sont, à tous les niveaux, sous-payés, ils ont en quelque sorte le désir de survivre, et pour survivre, ils abusent de leur position de pouvoir. La corruption est comme une pyramide, et tous les fonctionnaires espèrent recevoir leur cote-part. La seule manière de réussir une campagne contre la corruption est le refus du plus haut placé. Cela aura un effet domino vers le bas.

La disette et les privations alimentaires ont toujours l'agitation sociale dans un pays pauvre, et il n'est pas surprenant de voir des gens qui profitent du mécontentement et attribuent un teint politique à tout mouvement légitime, comme celui qui a eu lieu en Arménie au cours de cet été. La pauvreté est la poudrière des troubles sociaux.

Le 17 juin, le gouvernement arménien a approuvé une augmentation de 16,9% des tarifs d'électricité. Cela a déclenché un mouvement populaire contre la hausse des taux. Le mouvement a été étiqueté « Non au vol. » Aux États-Unis, les fluctuations des prix du pétrole obligent parfois les automobilistes à payer jusqu'à 50% de plus à la pompe. Ils se plaignent, mais cela ne les conduit pas à des manifestations, car ils peuvent se permettre ce nouveau prix. En Arménie, une hausse de 16,9% signifie faire un choix entre avoir de l'électricité à la maison ou non. Le 22 juin, les manifestants se

sont rendus dans la rue Baghramian où se trouvent le palais présidentiel et le Parlement. Bien que 247 manifestants aient été arrêtés, la police a attendu puis à désamorcer la crise, lorsque le Premier ministre Hovik Abrahamian a annoncé que son gouvernement allait absorber la hausse des prix en vendant la centrale hydro-électrique de Vorotan à une société américaine.

Les événements ont été suivis de près par toutes les grandes puissances. Parce que le réseau électrique est détenu par une société russe, on a tenté de présenter le mouvement comme anti-russe. Moscou, blessé par la crise en Ukraine, a fait flotter un faux document qui impliquait l'USAID comme instigateur du mouvement. Cependant, les États-Unis ne sont nullement désintéressés. Des interférences dans la crise en Ukraine et l'implication du département d'Etat dans la nomination d'Arseny Yatsenyuk comme nouveau Premier ministre, tel que révélé par Wikileaks, ne laissent aucun doute sur toute perturbation en Russie par « l'étranger proche » qui est une occasion d'intervenir et d'isoler Moscou. La politique étrangère d'un pays est le prolongement de sa politique intérieure. Peu importe la main conciliante tendue par le président Obama envers l'Iran, Cuba, l'Amérique latine et même la Syrie, il doit tendre vers un segment du spectre politique habillé du costume patriotique et hisser le slogan de « défense forte » à la recherche de guerres perpétuelles. La confrontation avec la Russie est la concession d'Obama aux fabricants et négociants d'armes.

Le fait qu'un influent quotidien tel le Washington Post évoque deux fois en un mois les manifestations arméniennes signifie que les observateurs politiques de ce côté de l'Atlantique ne sont pas indifférents à ce qui se passe dans ce petit pays d'une région reculée du monde.

La première référence du journal est un éditorial du 2 juillet intitulé « Voir des conspirations qui n'existent pas en Arménie » : « L'appareil de propagande de M. Poutine, cependant, n'a pas tardé à tirer des conclusions. Les médias russes ont déclaré que l'ambassade des États-Unis avait orchestré les manifestations afin de reproduire la révolution populaire de l'an dernier en Ukraine. » « Vous savez comment les révolutions de couleur, et Maidan en Ukraine ont commencé, a déclaré le ministre des Affaires étrangères Sergueï Lavrov. C'est une référence favorite à la théorie de la conspiration du Kremlin : les soulèvements populaires à Kiev et autres capitales européennes n'étaient pas spontanés, mais minutieusement chorégraphiés par la CIA. »

Malgré le sarcasme de son éditorial, le Post a publié un autre article de Zhanna Andreyan et Georgiu Derlugian dans son édition du 24 juillet, dans lequel le mouvement en Arménie est comparé au modèle ukrainien.

Suite à la page 8

Une majorité d'Anatoliens auraient des grands-mères arméniennes



